

Թիւ 4092
Մարտ 15, 1962

Հոգեշնորհ
Տ. Ժիրայր Աբղ. Թաշնեան
Հոգեւոր Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Թորանթօ.

Սիրելի Հայր Ժիրայր,

Ստացած ենք Ձեր Մարտ 12 թուակիր նամակը, որով կ'ընէիք
հետեւեալ հարցումները,

1. Երկու ամսուայ անդամագրուած անձ մը իրաւունք ունի
ընտրելու եւ ընտրուելու:
2. Անգլիքան Եկեղեցի յաճախող հայեր կրնան Ս. Հաղորդու-
թիւն ստանալ:

Ըստ Թեմական Կանոնադրութեան 7րդ յօդուածի տրամադրու-
թեան, Եխական Ժողովներու մասնակցելու, ընտրելու եւ ընտրուե-
լու իրաւունք ունին այն ամէն անձինք, որոնք ծուխի մը իրաւա-
սու անդամներ են եւ որոնց ԱՆԴԱՄԱԳՐՈՒԹԵՆՔՆ ԵՏԲԸ ԱՆՑԱԾ Է ԱՌ-
ՆՈՒԱԶՆ ՎԵՑ ԱՄԻՍ: Այս օրէնքը գործադրելի է ամէն պարագայի տակ:

Անգլիքան Եկեղեցի յաճախող այն հայերը, որոնք կը մասնակ-
ցին մեր Պատարագի Ս. Խորհուրդին եւ կը փափաքին Ս. Հաղորդութիւն
ստանալ, պէտք է խոստովանին նախապէս, ըստ օրինաց Հայ Եկեղեցւոյ,
եւ ապա Ս. Հաղորդութիւն ստանան:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի